ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ««ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/11

«17» ապրիլ 2019թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթացի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունն ընդունվում է ամբողջական դասընթացին (30 ժամ տևողությամբ) մասնակցի մասնակցության դեպքում (եթե մասնակիցը բացակայել է ապա հնարավորություն է տրվում լրացնել այն): Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի կատարումն ընդունելու նպատակով յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Կատարողը ներկայացնում է իր կողմից հաստատած գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման նպատակով ներկայացված մասնագետների կողմից՝ կցելով նաև վերջիններիս կողմից հաստատված ինքնակենսագրությունները:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7 860 000 (յոթ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Սարմենի 1, 2/1 ï³ñ³Ïù
ՀՎՀՀ՝ 02629081	«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011017325	Հ/Հ՝ 163008180909
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01571846
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝
պաշտոնակատար՝	
_____ Վ. Հարությունյան	_____ Ա. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«17» ապրիլ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	796 31200/4	«ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթաց*	դրամ	7 860 000	1	Ք. Երևան	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը:

*** «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթաց**

1. Ներածություն

Հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորները յուրաքանչյուր տարի մասնակցում են շարունակական վերապատրաստման դասընթացների՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541-Ն հրամանի: Դասընթացի նպատակն է ապահովել աուդիտորների վարքագծի կանոնների հիմնական սկզբունքներից կարողունակության սկզբունքը՝ նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործման միջոցով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման նպատակով հանրային հատցվածի որակավորված ներքին աուդիտորը պետք է յուրաքանչյուր տարի մասնակցի վերապատրաստման դասընթացի՝ 30 ժամ ընդհանուր տևողությամբ: Դասընթացն ընդգրկում է 19 թեմա: Դասընթացը կազմակերպվում է երկու խումբ մասնակիցների՝ ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի (շուրջ 85 անձ) և ներքին աուդիտորների (շուրջ 155 անձ) համար: Ընդ որում, յուրաքանչյուր խմբի հանար նախատեսված դասընթացն ունի պարտադիր 7 թեմա 24 ժամ/ 4 օր տևողությամբ և լրացուցիչ՝ մասնակցի ընտրությամբ 2 թեմա՝ յուրաքանչյուրը 3 ժամ, ընդհանուր 6 ժամ/1 օր տևողությամբ: Վերապատրաստման դասընթացները պետք է կազմակերպվեն շուրջ 250 որակավորված ներքին աուդիտորների համար:

Կազմակերպվելիք դասընթացների ժամանակացույցը և յուրաքանչյուր խմբում ընգրկվելիք մասնակիցների ցուցակը տրամադրում է պատվիրատուն: Ընդ որում՝ Պատվիրատուն թղթային տարբերակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով Կատարողին՝

- դասընթացների ժամանակացույցը տրամադրում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում.
- յուրաքանչյուր խմբում ընդգրկվելիք մասնակիցների ցուցակը (անուն, ազգանունը, հանրային հատվածի կազմակերպության անվանումը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) տրամադրում է դասընթացը սկսելուն նախորդող մինչև երրորդ աշխատանքային օրը:

Դասընթացներն անցկացվում են աշխատանքային օրերին՝ Երևան քաղաքում:

Մինչև դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը 17:00-ն Կատարողը թղթային տարբերակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի արտատպված (սկանավորված) տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան, կեսօրին և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Փաստաթուղթը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝ հանրային հատվածի կազմակերպության անվանումը, մասնակցի անունը, ազգանունը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Դասընթացի յուրաքանչյուր մոդուլն ավարտելուց հետո մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս մասնակցին շարադրելու իր կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածություն և նյութի մատուցման ձև ու որակ, դասավանդվող նյութի կարևորություն և խորություն, դասընթացի կազմակերպչական աշխատանքների որակ, այլ հարակից հարցեր, դիտողություններ և առաջարկություններ: Հարցաթերթիկի ձևը կազմում է Կատարողը՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Հարցաթերթիկների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները Պատվիրատուին տրամադրվում են թղթային տարբերակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ մինչև տվյալ օրվա ժամը 17:00-ն:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի բովանդակությունը և դրանց սլայդները: Ընդ որում դասընթացի կառուցվածքում յուրաքանչյուր թեմայի առնվազն 30 տոկոսը պետք է պարունակի գործնական պարապմունք:

Պատվիրատուն իրավունք ունի այցելելու դասընթացներին՝ դասախոսի կողմից դասընթացի վարման, մատուցվող նյութի և դասընթացի կազմակերպման որակը գնահատելու նպատակով:

Դասընթացները կազմակերպելու համար պահանջվում է առնվազն 2 լսարան՝ նախատեսված առնվազն 22 վերապատրաստվող անձանց համար, կահավորված դասավանդման համար անհրաժեշտ տեխնիկայով (համակարգիչ, պրոյեկտոր, սլայդների ցուցադրման համար էկրան, գրատախտակ):

2. Դասընթացների թեմաները և տևողությունը՝

2.1 Ներքին աուդիտի հիմունքներ՝ դերը, նպատակը, առաքելությունը՝ 3 ժամ (180 րոպե) 250 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի ներքին աուդիտի սահմանման մեկնաբանությունը և տրամադրի ներքին աուդիտի նպատակի, խնդիրների, առաքելության և դրանց իրագործման արդյունքում կազմակերպության համար ձևավորվող արժեքի նշանակության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգրկելով հանրային հատվածի կազմակերպության գործունեության համար դրանց կիրառելիության առնվազն մեկ պայմանական օրինակ:

2.2 Ներքին աուդիտի ստանդարտները և կիրառման ցուցումները, ներքին աուդիտորի վարքագծի կանոնները՝ 6 ժամ (360 րոպե) շուրջ 250 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N 974-Ն հրամանով հաստատված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների վերաբերյալ մասնագիտական մեկնաբանություն, ինչպես նաև գործնականում դրանց կիրառման առնվազն երկու օրինակ:

2.3 Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգ՝ կազմակերպության ռիսկերի բացահայտում, կառավարում, հսկողության համակարգերի կիրառում՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 250 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի հանրային հատվածի կազմակերպությունում ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) համակարգի գործունեության նպատակի և խնդիրների մեկնաբանություն, ՖԿՀ համակարգի կառուցվածքի, տարրերի և գործունեության նկարագրություն, ներքին աուդիտի գործունեության համար ՖԿՀ համակարգի նշանակության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ներքին աուդիտի իրականացման ընթացքում ՖԿՀ համակարգի և դրա տարրերի գնահատման առնվազն մեկ գործնական օրինակ:

2.4 Ներքին աուդիտի պլանավորում՝ ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմում՝ ներառյալ ռիսկերի գնահատում՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 164 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմման մեթոդաբանությունը՝ ներառելով գործնական առնվազն մեկ օրինակ:

2.5 Աուդիտորական առաջադրանքի պլանավորում, ներառյալ աշխատանքային ծրագրի կազմում, առաջադրանքի կատարում, ներառյալ աուդիտորական տեխնիկաների կիրառում՝ 3 ժամ (180 րոպե) 164 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի աուդիտորական առաջադրանքի պլանավորման, աշխատանքային ծրագրի կազմման, աուդիտորական տեխնիկաների օգտագործմամբ առաջադրանքի կատարման մեթոդաբանությունը՝ ներառելով գործնական առնվազն մեկ օրինակ:

2.6 Աուդիտորական առաջադրանքի հաշվետվության կազմում՝ կառուցվածքը, բովանդակությունը, բացահայտումները՝ ներառյալ թերությունները և լավագույն գործելակերպը, բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 164 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի աուդիտորական առաջադրանքի հաշվետվության կազմման մոտեցումները, ձևը, բովանդակությունը՝ ներառելով թերությունների, բացահայտված լավագույն փորձի և բարելավմանն ուղղված առաջարկությունների հաշվետվությունում ձևակերպման մոտեցումները՝ ներառելով գործնական առնվազն մեկ օրինակ:

2.7 Վերստուգման գործընթաց՝ ներառյալ գործառույթների բարելավման գնահատում՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 164 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի իրականացված աուդիտորական առաջադրանքի արդյունքների հիման վրա ներկայացված բարելավմանն ուղղված առաջարկությունների կատարման նկատմամբ վերստուգման իրականացման ձևերի և վերստուգման արդյունքների կապակցությամբ

հետագա գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառելով գործնական առնվազն մեկ օրինակ:

2.8 Որակի երաշխավորման և բարելավման ծրագիր՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 86 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի 1300 ստանդարտի և դրա կիրարկման վերաբերյալ մանրամասն մեկնաբանություն՝ ներառյալ Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կազմման և կատարման մոտեցումները՝ ներառելով գործնական առնվազն մեկ օրինակ:

2.9 Աշխատանքի, աշխատակազմի, առաջադրանքի կառավարման կազմակերպում՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 86 մասնակիցների համար

Ուսուցման նյութը ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարությանը պետք է տրամադրի այնպիսի տեսական և գործնական գիտելիքներ, որոնք վերաբերում են ներքին աուդիտի գործունեության կազմակերպման, մարդկային և ժամանակային ռեսուրսների կառավարման, աշխատանքների բաշխման, հաշվետվողականության ապահովման հարցերին:

2.10 Համագործակցություն կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի, լիազոր մարմնի հետ՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 86 մասնակիցների համար

Ուսուցման նյութերում պետք է ներկայացվեն օրենսդրական այն պահանջները, այդ թվում՝ ներքին աուդիտի անկախության սկզբունքին առնչվող, որոնք կարգավորում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարության կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի և լիազոր մարմնի հետ համագործակցության շրջանակները, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանման իրավունքներն ու պարտականությունները նշված համագործակցության ենթատեքստում:

2.11 Խարդախության նշաններ, հետագա գործողություններ՝ 3 ժամ (180 րոպե) շուրջ 86 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է տրամադրի տեսական և գործնական գիտելիքներ՝ խարդախության նշանները ճանաչելու և հնարավոր ռիսկերը տեսնելու, ինչպես նաև հետագա գործողությունները օրենսդրության համապատասխան կազմակերպելու համար:

2.12 Բանակցությունների և հարցազրույցների վարում, հաղորդակցման հմտություններ՝ 3 ժամ (180 րոպե)՝ առնվազն 36 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է տրամադրի աուդիտի գործառույթի իրականացման համար անհրաժեշտ բանակցություններ, հարցազրույցներ վարելու և հաղորդակցվելու հմտությունների վերաբերյալ տեղեկատվություն:

2.13 SS աուդիտի գիտելիքներ ոչ SS աուդիտորների համար՝ 3 ժամ (180 րոպե) 42 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի այնպիսի տեղեկատվություն, որը հնարավորություն կտա SS ոլորտում մասնագիտացում չունեցող ներքին աուդիտորներին SS ծրագրերի, դրանց ռիսկերի և հետևանքների վերաբերյալ բազային իմացություն ձևավորելու համար:

2.14 SS աուդիտ, SS ռիսկերի առանձնահատկություններ և SS հսկողություն՝ 3 ժամ (180 րոպե) 35 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի մասնագիտական տեղեկատվություն SS ծրագրերի համապատասխանության և արդյունավետության գնահատման՝ ներառյալ ռիսկերի բացահայտման, վերացման, ֆունկցիոնալության օպտիմալացման, արդիականացման կամ թարմացման անհրաժեշտության համար

2.15 Գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգ՝ 3 ժամ (180 րոպե) 28 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է պարունակի.

- *Client Treasury էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ համակարգ) նախնական ներկայացում (ընդհանուր գծերով),*
- *Բյուջեի պլանների մուտքագրում համակարգ (նախահաշիվ, համայնքային բյուջե),*
- *Պայմանագրերից քաղվածքների մուտքագրում համակարգ,*
- *Վճարումների իրականացում համակարգի միջոցով (վճարումների բոլոր տեսակները),*
- *Տարբեր տեսակի տեղեկատվության արտահանում՝ հաշվետվությունների միջոցով (ընդ որում պետք է ներկայացվեն բոլոր հաշվետվությունները, որոնք հնարավոր է գեներացնել համակարգի միջոցով):*

2.16 Գնումների էլեկտրոնային համակարգի ուսուցում (ARMEPS, PPCM)՝ 3 ժամ (180 րոպե) 97 մասնակիցների համար

Ուսուցման նյութը պետք է ներառի էլեկտրոնային գնումների և գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման ու հաշվետվողականության էլեկտրոնային համակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և ներքին աուդիտի տեսանկյունից ուշադրության արժանի հատվածները:

2.17 Ծրագրային բյուջետավորում (պլանավորում, կատարում, հաշվետվություններ)՝ 3 ժամ (180 րոպե) 41 մասնակիցների համար

Ուսուցման նյութերում պետք է ներկայացվեն ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունը, ծրագրերի և միջոցառումների սահմանման եղանակները, արդյունքային ցուցանիշները, դրանց սահմանումը, ինչպես նաև ներքին աուդիտի անդրադարձն արդյունքային ցուցանիշներին, որպես ծրագրի կատարողականի գնահատման չափորոշիչներ՝ ներառյալ պայմանական ծրագրի կատարողականի աուդիտի առնվազն մեկ գործնական աշխատանքի կատարում:

2.18 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման աուդիտ (ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և ցուցանիշների համադրելիություն հարկային հաշվետվությունների հետ)՝ 3 ժամ (180 րոպե) 75 մասնակիցների համար

Ուսուցման նյութերում պետք է ներկայացված լինեն ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրությունը (ներառյալ՝ ստանդարտները և հաշվային պլանը), ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրման և վերլուծության տեխնիկա(ներ):

2.19 Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրեր, Ներքին աուդիտի ժամանակ դրանց օգտագործման հմտություններ՝ 3 ժամ (180 րոպե) 108 մասնակիցների համար

Ուսուցման նյութերում պետք է ներկայացվեն հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման գործունեության կազմակերպման համար օգտագործվող համակարգչային ծրագրերը, ներքին աուդիտի իրականացման համար ներքին աուդիտորների կողմից այդ ծրագրերից օգտվելու հնարավորությունները՝ ներառյալ պայմանական գործնական առնվազն մեկ օրինակ:

Ծառայության անվանումը	Ընդհանուր գինը 1 մասնակցի համար /տառերով և թվերով/
2	3
1. Ներքին աուդիտի հիմունքներ՝ դերը, նպատակը, առաքելությունը՝ 3 ժամ (180 րոպե)	4 000 (չորս հազար)
2. Ներքին աուդիտի ստանդարտները և կիրառման ցուցումները, ներքին աուդիտորի վարքագծի կանոնները՝ 6 ժամ (360 րոպե)	5 500 (հինգ հազար հինգ հարյուր)
3. Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգ՝ կազմակերպության ռիսկերի բացահայտում, կառավարում, հսկողության համակարգերի կիրառում՝ 3 ժամ (180 րոպե)	4 000 (չորս հազար)
4. Ներքին աուդիտի պլանավորում՝ ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմում՝ ներառյալ ռիսկերի գնահատում՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
5. Աուդիտորական առաջադրանքի պլանավորում, ներառյալ աշխատանքային ծրագրի կազմում, առաջադրանքի կատարում, ներառյալ աուդիտորական տեխնիկաների կիրառում՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
6. Աուդիտորական առաջադրանքի հաշվետվության կազմում՝ կառուցվածքը, բովանդակությունը, բացահայտումները՝ ներառյալ թերությունները և լավագույն գործելակերպը, բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
7. Վերստուգման գործընթաց՝ ներառյալ գործառույթների բարելավման գնահատում՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
8. Որակի երաշխավորման և բարելավման ծրագիր՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
9. Աշխատանքի, աշխատակազմի, առաջադրանքի կառավարման կազմակերպում՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
10. Համագործակցություն կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի, լիազոր մարմնի հետ՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
11. Խարդախության նշաններ, հետագա գործողություններ՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
12. Բանակցությունների և հարցազրույցների վարում, հաղորդակցման հմտություններ՝ 3 ժամ (180 րոպե)	4 000 (չորս հազար)
13. SS աուդիտի գիտելիքներ ոչ SS աուդիտորների համար՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
14. SS աուդիտ, SS ռիսկերի առանձնահատկություններ և SS հսկողություն՝ 3 ժամ (180 րոպե)	4 000 (չորս հազար)
15. Գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգ՝ 3 ժամ (180 րոպե)	4 000 (չորս հազար)
16. Գնումների էլեկտրոնային համակարգի ուսուցում (ARMEPS, PPCM)՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
17. Ծրագրային բյուջետավորում (պլանավորում, կատարում,	3 000 (երեք հազար)

հաշվետվություններ)՝ 3 ժամ (180 րոպե)	
18. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման աուդիտ (ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և ցուցանիշների համադրելիություն հարկային հաշվետվությունների հետ)՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)
19. Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրեր, Ներքին աուդիտի ժամանակ դրանց օգտագործման հմտություններ՝ 3 ժամ (180 րոպե)	3 000 (երեք հազար)

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017325
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

------------------------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 ï³ñ³íù
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 163008180909
ՀՎՀՀ՝ 01571846
Տնօրեն՝

------------------------- Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 17 » ապրիլ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	796 31200/4	«ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթաց				786 000	1 572 000	2 358 000	3 144 000	3 930 000	4 716 000	5 502 000	6 681 000	7 860 000	7 860 000

**Վճարումն իրականացվում է պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին՝ յուրաքանչյուր դասընթացին փաստացի մասնակցած անձանց թիվը մեկ անձի համար սահմանված գումարով բազմապատկելու միջոցով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017325
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 փ³ռ³ին
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 163008180909
ՀՎՀՀ՝ 01571846
Տնօրեն՝

_____ Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 17 » ապրիլ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի՝		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » ապրիլ 2019թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն